այլ Մարգմանիչք այսպիսիք ոչ, և ոչ երևին այսօր սրբազան հետք նորա։ Եւ յամենայնի յայսոսիկ ունին սոքա առանձինն քաջութիւնս, ունին և միաբան աննախանձ նահատակութիւն, դժուարին և 'ի սուրբս անգամ։

Եցեն ապա 'ի մասին ինչ բարեացս հաւասարեալ սոցա կամ թէ առաւելեալ՝ այլոց ոմանց 'ի հինս և 'ի նորս, 'ի քաղաքագետս և հայրենասէրս, յիմաստունս և 'ի սուրբս. այլ միահամուռ լրութեամբ այսքանեօք որ 'ի սոսա փայլէնն բարեմանութեամբք՝ ախոյեանս դիմակալս սոցա յարուցանել, կարծեմ նմա միայն է կարելի, որ ճանաչէն և զտուրս ընդհանուր հաց իւրոց և զջանս ընդունողացն և զպակս ջանացողացն։ Որով և ինձ 'ի սպառել բանիցս որ առ բարձրութիւն ձեր նկրտեր, ով վեհք 'ի հանդիսարանս Հայոց, իմաստուն և սուրբ Մարգմանիչք, զայս միայն լսցի վասն ձեր գոչել ընդ Դաւթեայ, եթէ "Օ մի 'ի նոցանէ ոչ արժէ աշխարհս համօրէն"։

Հ. Ղ. Մ

Ա.

Մէկ մի կայ որ հազար արժէ,
Հազար կայ որ մէկ մի չարժէ,
Ու այն մէկն որ հազար արժէ,
Մօտ յանգէալն փող մի չարժէ։

Բ.

Յանհաւաստ մարդոյ 'ի զատ կաց ու հեռի,
Թէ քեզ հայր է կամ եղբայր և կամ որդի.
Հետ փըշին մի տալ ու առնուլ զինչ հետ ուռի,
Թէ չէ՝ 'ի ձեռնըդ բեռուի, և քեզ մեծ կսկիծ լինի։

ՈՍԿԻՓՈՐԻԿ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Հացածառ կամ Հացապտուղ[1]։

Ռուսաց մէջ խիստ օգտակար ու գեղեցիկ ծառերէն մէկն ալ ասիկայ է. ու կը գտնուի Սիբիր հարաւային կողմերը, և մանաւանդ Ալկիանիայի կղզիներուն մէջ. տեղացիք աս ծառը կը հոգան կը մեծցընեն, ու պտուղը հացի տեղ կ'ուտեն։

Ծառին բարձրութիւնը միջակ է, տեսքը աղուոր, գլուխը կլոր, ճիւղերը կարճ ու դէպ 'ի վար ծռած, տերևները սիրուն կանանչ ու ճղքըռտած։ Ճիւղերուն վերի ծայրերը հինգ վեց տերևէ ձևացած փունջ մը կայ, անոր մէջ կը բացուի ծաղիկը։

Պտուղը կլոր ու քիչ մը հաւկրթաձև է՝ տղու գլխու չափ. կեղևը հաստ, խորտուբորտ ու կանանչ, և հաստունցած ատենը կը դեղնի. միջուկը առաջ ճերմակ կ'ըլլայ, ետքը կը դեղնի, և ասիկայ է որ հացի տեղ կ'ուտուի։

Հինգ վեց տեսակէն աւելի է հացածառը. և ասոնք իրենց ձևովն ու մեծութեամբը իրարմէ քիչ շատ կը տարբերին, բայց ամէնն ալ տաք երկիրներու մէջ միայն առաջ կուգան։ Մէկ տեսակը կայ որ պտուղները խիստ խոշոր են, այնպէս որ մէկ հատը մէկ մարդ հազիւ կրնայ վերցընել։

Մալապարի ծովեզերքը մէկ տեսակը կայ որ կեղևէն թել մը կ'ելլէ, և տեղացիք անկէ բարակ կտաւ կը գործեն. փայտը տուն և նաւակ շինելու կը գործածեն, բունէն ալ խէժ մը կ'ելլէ որ այլ և այլ բաներու կը գործածուի։

Ընդհանրապէս հացածառին պըտուղը քիչ մը կանկառի ու շագանա-

[1] Լա. յունական բառով Artocarpus, որ հացապտուղ կը նշանակէ։